

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՎԵԼԻՆԱ ՌՈՐԵՐՏԻ ԶԱԴՈՅԱՆ

**ՀԵՏԱՀԱՅՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՀԱՅՈՒՄ ՏԵՔՍՏԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐՈՒՄ**  
(անգլերեն նյութի հիման վրա)

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանում:

- Գիտական ղեկավար՝** Բ. Գ. Դ., պրոֆեսոր Լ.Յ. Ֆլջյան
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝** Բ. Գ. Դ., պրոֆ. Դ. Յ. Համբարձումյան  
Բ. Գ. Ք., պրոֆ. Ե. Ս. Մխիթարյան
- Առաջատար կազմակերպություն՝** Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 6-ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
Բ.Գ.Դ., պրոֆեսոր



Ե. Լ. Երզնկյան

Հասարակության մշակութային կյանքի հարաճուն զարգացումների համատեքստում ավելի քան արդիական են տարբեր ժանրերի տեքստերի մեկնաբանման և վերլուծության խնդիրները: Ավելին՝ հետսոցիոէմոցիոնալ դարաշրջանում, երբ ավանդական տեքստի հետ մեկտեղ առկա են ձևավորվածքի առումով փոփոխական, էլեկտրոնային տեքստեր, արդիական է դառնում տարբեր ժամանակահատվածներում գրված գեղարվեստական և փաստագրական ստեղծագործությունների լեզվական ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով, որ տեքստի լեզվական և ոճական կարգերի ուսումնասիրությունը համարվում է լեզվաբանության մեջ կարևորագույն խնդիր, վերջին տարիներին տեքստի տեսության շրջանակներում աճել է հետաքրքրությունը տեքստի՝ որպես բարդ և բազմատարր երևույթի, նկատմամբ: Գաղտնիք չէ, որ արտահայտչական և ոճական հնարների ուսումնասիրությունը, կոնկրետ ժանրի և ոճի ճանաչողությունը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են տեքստի համալիր հետազոտության համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ուսումնասիրել տեքստի կարգերը՝ այսպես կոչված տեքստային պարամետրերը, քանի որ վերջիններս ոչ միայն օգնում են հետազոտողներին ճանաչել և նույնականացնել տեքստի տիպաբանական բնութագրիչները, այլև օժանդակում են տեքստի ամբողջական ընկալմանը:

Սույն ատենախոսության մեջ ուսումնասիրվում են տեքստային այնպիսի կարգերի հարաբերակցություններ, ինչպիսիք են եղանակավորումը, ամբողջականությունը, ներկապակցումը, հետահայումը (ռետրոսպեկցիա) և առաջահայումը (պրոսպեկցիա): Քանի որ հուշագրությունները, ժանրով պայմանավորված, անցյալի դեպքերի նկարագրություններ են և ինքնին արդեն հիմք են հանդիսանում հեղինակի կողմից հետահայման, ինչպես նաև նրա կողմից սուբյեկտիվ առաջահայման համար, առաջահայում և հետահայում տեքստային կարգերն իրենց բազմապիսի դրսևորումներն են գտնում հուշագրության ժանրում: Պետք է նշել, որ սույն ատենախոսության մեջ հետահայում և առաջահայում տեքստային կարգերն ուսումնասիրվում են ոչ միայն որպես ժամանակի կարգի լեզվական դրսևորումներ հուշագրության ժանրում, այլև ժանրային և կառուցվածքային տեսանկյունից: Բացի այդ, ուշարժան է այն հանգամանքը, որ որպես փաստական հիմքով և բովանդակային առումով ոչ գեղարվեստական տեքստ՝ հուշագրությունը հագեցած է հուզականությամբ և հետևաբար՝ նաև գեղարվեստական տարրերով: Այս առնչությամբ տեղին է նկատել Ս. Գասպարյանի և համահեղինակների դիտարկումը, որ «չնայած երկու հիմնական՝ հաղորդման և ներգործման գործառույթների հակադրմանը, դրանց միջև գոյություն չունի անասան անջրպետ»: Ավելին՝ նշվում է, որ «այդ հակադրությունը պայմանական բնույթ ունի, քանի որ մարդկային խոսքում լեզվի բոլոր տարրերը գտնվում են անընդհատ շարժման և փոխադարձ կապի մեջ»:

Սույն ատենախոսության **արդիականությունը** պայմանավորված է թեմայի ընտրությամբ. ինչպես անհատի նախորդ փորձի վերափնաստավորումը, այնպես էլ դրա լեզվական արտահայտության տեսական արժևորումը,

---

<sup>1</sup> Տե՛ս Ս. Գասպարյան. Գ. Սուրադյան, Ն. Գասպարյան, Գործառական ոճագիտություն (անգլերենի գործառության արդիական հարցեր), Երևան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 33:

անշուշտ, ժամանակակից գիտական հարացույցի շրջանակներում և նոր մշակումների լույսի ներքո նոր հնչեղություն են ստանում: Հետազոտող-ընթերցողի դիտակետից հետաքրքիր է վերլուծել և ինչ-որ առումով «վերամենկաբանել» հուշագրության հեղինակի մեկնաբանությունը՝ որպես հետահայում կամ առաջահայում՝ ուղղված իր փորձառությամբ: Սա հատկապես արդիական է, եթե հաշվի առնենք ժամանակային տարբերություններն ու հնարավոր հատումները հեղինակի և ընթերցողի ժամանակների միջև և դրանց վերաիմաստավորումը իմաստային ներկայում, որն ընթերցողին է: Ուսումնասիրության հարցադրումներն արդիական են նաև այն առումով, որ առարկան ինքնակենսագրական ժանրի ենթաժանր հուշագրությունն է, որտեղ տեղեկատվական գործառույթի իրացմանը զուգահեռ մուտք են գործում գեղարվեստական մտածողության տարրեր, իսկ գեղարվեստական անցյալը տարբեր լեզվական հնարներով տարածվում է և ներկայի, և՛ ապագայի վրա:

Աշխատանքի **կապտակն** է ուսումնասիրել հետահայում և առաջահայում տեքստային կարգերի լեզվական դրսևորումները հուշագրության ժանրում, որին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. քննել հետահայում և առաջահայում տեքստային կարգերի սերտ առնչությունը տեքստային այլ կարգերի հետ հուշագրության ժանրում՝ ելնելով հեղինակային սուբյեկտիվության առանձնահատկությունից,

2. հետազոտել ժամանակի կարգի արժևորման տեսական հիմքերը,

3. նկարագրել տեքստում, տվյալ դեպքում՝ հուշագրություններում, ժամանակային կառույցները՝ հակադրելով հուշագրային ժամանակն իրական ժամանակի հետ,

4. առանձնացնել հետահայումը և առաջահայումը՝ որպես տեքստային կարգեր, որոնք հուշագրության հեղինակը կիրառում է հուշագրային տեքստում ժամանակային պլան ստեղծելու համար,

5. ուսումնասիրել հուշագրությունների ժանրային առանձնահատկությունները,

6. դիտարկել հետահայում և առաջահայում կարգերը և՛ որպես ժամանակային ընդհատումներ առաջացնող, և՛ միևնույն ժամանակ որպես հուշագրային տեքստի ամբողջականացումը խթանող միջոցներ,

7. ուսումնասիրել հետահայում և առաջահայում տեքստային կարգերի լեզվական դրսևորումները հուշագրության ժանրում:

Աշխատանքի **գիտական նորույթը** պայմանավորված է առաջին հերթին ուսումնասիրության առարկայի ընտրությամբ, հուշագրության՝ թե՛ որպես ժանրի և թե՛ որպես տեքստի համալիր ուսումնասիրությամբ՝ ներառյալ հետահայում և առաջահայում տեքստային կարգերը: Աշխատության մեջ նորովի է սահմանվում նաև հետահայման կարգը՝ որպես քառատարր, հիբրիդ բնույթ ունեցող. մասնավորապես, հուշագրության ժանրում հետահայումն ընդգրկում է ոչ միայն ընթերցողի սուբյեկտիվ և հեղինակի օբյեկտիվ չափումները, այլև բնորոշ կերպով՝ **հեղինակի հետահայման սուբյեկտիվ և ընթերցողի՝ օբյեկտիվ** տարրերը: Այս հարցադրումներին համահունչ՝ ներմուծվում է նաև մետալեզվական նորույթ՝ «հետահայական վերասույթային

միասնություն», հուշագրություններում հետահայման տեղակայումը ճշգրտելու նպատակով:

Հուշագրության ժանրային առանձնահատկություններին նվիրված աշխատություններ կան ինչպես արևմտյան, այնպես էլ ռուսական ավանդություն, սակայն դրանք չեն կրում բազմակողմանի և համալիր բնույթ: Սույն աշխատությունն իր հարցադրումների համադրությամբ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ համակողմանի վերլուծության են ենթարկվում հուշագրության ժանրային, կառուցվածքային, տեքստային և լեզվական առանձնահատկությունները՝ ժամանակային կարգերի՝ հետահայման և առաջահայման առանցքի շուրջ:

Աշխատանքի ուսումնասիրության փաստական նյութը քաղված է անգլիական և ամերիկյան հուշագրություններից՝ հեղինակված՝ Դոնալդ Բուրգետտի (Currahee!: The Memoirs of Donald Burgett 1967), Ջորջ Ֆրոսթ Քեննենի (George F. Kennan, Memoirs 1983), Ջոն Քենեթ Գալբրեյթի (A Life in Our Times: Memoirs by John Kenneth Galbraith 1981), Դուայթ Այզենհաուերի (At Ease: Stories I Tell to Friends: Memoirs by Dwight Eisenhower 1988), Միսթր Յեմֆերի (Memoirs of Mr. Hempher, The British Spy to The Middle East: Confessions of a British Spy and British Enmity against Islam) կողմից: Նշված փաստական նյութի հիման վրա կատարված հետազոտության **առարկան** հուշագրության ժանրում հետահայում և առաջահայում տեքստային կարգերի և նրանց լեզվական դրսևորումների վերհանումն է:

Հուշագրությունների ընտրությունը պայմանավորված է հետևյալ երկու նկատառումներով:

Առաջին, այն ժամանակահատվածները, որոնց մասին գրում են հուշագրությունների հեղինակները, ակնհայտորեն հարուստ են պատմական, քաղաքական, տնտեսական, դիվանագիտական կյանքում տեղի ունեցող կարևորագույն իրադարձություններով, որոնց ներկայացման համար հեղինակները բազմիցս կիրառում են ինչպես հետահայում, այնպես էլ առաջահայում՝ անցյալ ժամանակահատվածում ժամանակային ընդհատումները միավորելու, անցյալը հուշագրային ներկայի հետ կապելու և այն արժևորելու համար:

Երկրորդ, վերոհիշյալ հուշագրությունների հեղինակները իրենց մասնագիտության մեջ հայտնի մարդիկ են, հարուստ մասնագիտական փորձով, ուստի և այն լեզուն, որով նրանք ներկայացնում են իրենց կյանքի պատմությունը, բազմաշերտ է, իսկ ժամանակային անցումները՝ առավել հաճախակի հանդիպող:

Ատենախոսության մեջ քննվող հուշագրային նյութում առկա հետահայման և առաջահայման լեզվական դրսևորումները հիմնականում պայմանավորված են երեք գործոնով.

- օբյեկտիվ իրականությամբ, որում ապրել է հեղինակը և որի մասին հիշում է նա,
- հուշագրությունների հեղինակի աշխարհայացքով և նրա լեզվամտածողությամբ, որոնք էլ արտացոլվում են հուշագրային կերպարների ընտրության և նկարագրման, հուշագրային տեքստի կառուցվածքի, նրանում ժամանակային ցատկերի, հուշագրային

սյուժեի զարգացման եղանակի և ոճական միավորների ընտրության մեջ,

- հուշագրությունների ընթերցողի՝ գեղարվեստական ստեղծագործության ընկալման մակարդակով և նրա՝ տեքստում ժամանակային շեղումները նկատելու և դրանք համապատասխանորեն ապակողավորելու ունակությամբ:

Ատենախոսության **մեթոդաբանությունը** պայմանավորված է հուշագրության ժանրի առանձնահատկություններով և հետահայման ու առաջահայման դրսևորումներով, որոնց վերծանման համար կիրառվել են այնպիսի **մեթոդներ**, ինչպիսիք են նկարագրական, զուգադրական, համատեքստային և կառուցվածքային վերլուծության մեթոդները:

Սույն ատենախոսության հարցադրումների համար ելակետ են հանդիսացել Մ. Բախտինի, Յու. Լոտմանի, Ի. Գալպերինի, Մ. Յալիդեյի, Ջ. Տուրանայի, Տ. Միլևսկայայի գիտական աշխատությունները տեքստի տեսության, ժամանակի կարգի, ժանրային ձևի, հուշագրության ժանրի, տեքստային կարգերի տեսության մասին:

Աշխատանքում փորձ է արվել համակողմանիորեն քննել հետահայում և առաջահայում երևույթները՝ որպես ժամանակային կարգերի փոխազդեցությամբ պայմանավորված բարդ (օրինակ՝ ցատկանման) դրսևորումներ՝ իրենց համապատասխան տեքստաստեղծ և խոսքարտահայտչական առանձնահատկություններով: Ըստ այդմ՝ **տեսական** ձեռքբերում կարելի է համարել նշված մեթոդաբանական հիմքի վրա ինչպես մասնավորապես՝ առաջահայում և հետահայում կարգերի, այնպես էլ առավել լայն առումով՝ նաև այլ տեքստային կարգերի հետ փոխներգործության արժևորումը: Գոյություն ունեցող տեսական մոտեցումների համեմատ՝ աշխատանքում կատարված նոր հարցադրումների իմաստավորումը և հիմնավորումը իրենց նպաստը կբերեն նաև լեզվաբանության մեջ քիչ հետազոտված ոլորտի զարգացմանը:

Հետազոտության **գործնական արժեքն** այն է, որ նոր մշակումներն ու ձեռքբերված արդյունքները կարող են օգտակար լինել ոլորտի հետագա ուսումնասիրությունների մեջ, մասնագիտական բաժինների ուսանողների համար՝ կուրսային և ավարտական աշխատանքներ գրելիս, ինչպես նաև ծառայել որպես օժանդակ նյութ ոճագիտության դասընթացի շրջանակներում:

**Աշխատանքի կառուցվածքը** բխում է հետազոտության թեմայից և պայմանավորված է մեր առջև դրված խնդիրներով. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության **ներածության մեջ** ներկայացված են աշխատանքի թեման ու հիմնահարցերը, որոշարկվում են նպատակը, խնդիրները, նորույթը, վերլուծության հիմնական մեթոդները, կառուցվածքը, տեսական և գործնական արժեքները:

Ատենախոսության **առաջին գլուխը**, որը վերնագրված է **«Տեքստային կարգերի դրսևորումները հուշագրության ժանրում»**, բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում՝ «Տեքստը՝ որպես լեզվաբանական ուսումնասիրության առարկա», քննության են առնված տեքստի

սահմանումները, նրա կառուցվածքային և հաղորդակցական առանձնահատկությունները: Հորինվածքի տարրերը մի կողմից կարող են հանդիպել փաստագրական ստեղծագործություններում, մյուս կողմից, գեղարվեստական տեքստում կարող են արտահայտվել նաև ոչ գեղարվեստական տեքստերին բնորոշ տարրեր: Այս առումով գեղարվեստական տեքստն ապակողավորման ընթացքում ընթերցողի մոտ առաջացնում է որոշակի «սպասումներ», որոնք սովորաբար պայմանավորված են տեքստում արժարժվող թեմաների, տեքստի կառուցվածքի, ինչպես նաև տեքստի կարգերի մասին հասցեստիրոց/ընթերցողի գիտակցության մեջ ամրագրված պատկերացումներով՝ նախևառաջ թելադրված տեքստի ժանրով: Գրողի ոճը, նրա հեղինակային անձը, նրա հերոսները, թեմաները և կերպարները արտացոլվում են նրա լեզվում և միայն դրանում և միայն դրա միջոցով կարող են հասանելի լինել ընթերցողին<sup>2</sup>:

Գեղարվեստական տարրերի զուգակցման շնորհիվ՝ հուշագրային տեքստում ստեղծվում է տարածաժամանակային հարաբերությունների որոշակի կաղապար, և իմաստային ծավալումն իրականանում է ժամանակային տեղաշարժերի միջոցով:

Երկրորդ ենթադիսում, որը վերնագրված է «Տեքստային կարգերի հարաբերակցությունը հուշագրության ժանրում», կիզակետում են պահվում տեքստի կարգ հասկացությունը, տեքստի կարգերի վերաբերյալ տարբեր լեզվաբանների մոտեցումները: Հիմք է ընդունվում Ի. Գալպերինի առաջադրած տեքստային կարգերի համալիրը:

Աշխատանքի երկրորդ գլուխը վերնագրված է «**Ժամանակի կարգը հուշագրության ժանրում**», որի առաջին ենթադիսում՝ «ժամանակի կարգի լեզվական դրսևորումները տեքստում», քննության են առնվել ժամանակի կարգի լեզվական դրսևորումները տեքստում: Ժամանակի կարգի վերաբերյալ տարբեր մոտեցումների կիրառմամբ՝ քննվում են գեղարվեստական և իրական ժամանակների տարբերությունները և փոխազդեցությունը: Գեղարվեստական ժամանակը նաև ընկալման գործընթաց է, երեք սուբյեկտների՝ հեղինակի, ընթերցողի և կերպարի, ժամանակների բարդ միահյուսումն է: Այն ոչ այնքան իրադարձությունների օրացուցային հաշվարկն է, որքան դրանց միջև հարաբերակցությունը, հիմնավորումը, զուգորդական, պատճառահետևանքային, հոգեբանական կապերի, իրադարձությունների բարդ շարքի ստեղծումը, որոնք ներկառուցված են սյուժեի հենքին: Իրական ժամանակի կարևոր հատկանիշն է նրա անշրջելիությունը, ժամանակը ոչ միայն շարժվում է, այլև շարժվում է անցյալից դեպի ապագա ուղղությամբ<sup>3</sup>:

Հետաքրքիր է, որ անհատական ժամանակը, ինչպես և իրականը, իր ընթացքով ձգտում է մի ուղղության՝ սկզբից վերջ, անցյալից դեպի ապագա՝ ներկայի միջոցով, իսկ գեղարվեստական ժամանակը, ինչպես արդեն նշվել է,

---

<sup>2</sup> Виноградов В.В. *О языке художественной литературы*. Гослитиздат, 1959.  
Электронный ресурс: Режим доступа: <http://danefae.org/lib/vvy/ojaxl/> (12.05.11).

<sup>3</sup> Рейхенбах Г. *Направление времени*. М.: Иностран. лит., 1962.

կարող է ընթանալ տարբեր ուղղություններով: Այո, անհատական ժամանակը ևս անշրջելի է. չի կարելի վերադարձնել անցյալը, մինչդեռ այլ է գեղարվեստական ժամանակը: Տեքստի հատվածները, որոնցում ժամանակի մի միավորում տեղի են ունենում բազմաթիվ իրադարձություններ, մենք ընդունում ենք որպես դինամիկ, իսկ հակառակ դեպքում՝ ստատիկ: Այլ կերպ ասած՝ ժամանակը ներկա է տեքստում անընդհատ, այն ընկալվում է կերպարների կողմից՝ գրական երկի տրամաբանության շրջանակներում, իսկ ընթերցողների կողմից՝ արտաքինապես, բայց ոչ թե ինքնին *per se*, այլ տեքստում գտնվող և գործող հերոսի դիտակետից<sup>4</sup>:

Երկրորդ ենթազխում՝ «Յուզագրության ժանրի գեղարվեստական հայեցակերպը», անդրադարձ է կատարվում ժանրի քննությանը, սահմանմանը, առաջնային և երկրորդային ժանրերի փոխներգործությանը: Յիմք է ընդունվել Մ. Բախտինի ժանրի սահմանումը, ըստ որի՝ որպես ստեղծագործության կայացած տեսակ՝ ժանրը բնութագրվում է 3 անբակտելիորեն փոխկապակցված տարրերով, որոնք նաև կոչվում են ժանրային ազդանշաններ: Դրանք են՝ 1. *հատուկ թեմատիկ բովանդակությունը*, 2. *ոճը* (այսինքն՝ բառային, արտահայտչական և քերականական միջոցների բազմազանությամբ) և վերջապես՝ 3. *կառուցվածքը*<sup>5</sup>:

**Յուզագրության ժանրը առանձնանում է որպես փաստի վրա հիմնված տեքստի տեսակ՝ հագեցած գեղարվեստական տարրերով:**

Ինքնակենսագրություններն ու հուշագրությունները ձևով շատ նման են: Դրանք տարբերվում են միայն բովանդակային և հայեցակարգային շեշտադրումներով. եթե ինքնակենսագրության թեման պատմողի սեփական կյանքն է, որտեղ նրա ուշադրությունը կենտրոնացած է սեփական անհատականության զարգացման գործընթացի, սեփական «ես»-ի կայացման, սեփական ինքնության ձևավորման վրա, ապա հուշագրությունը նկարագրում է հեղինակի կյանքը՝ շեշտադրելով ժամանակային հենքը. «Յետաքրքիր ոչ թե ես եմ, այլ ժամանակաշրջանը»<sup>6</sup>:

Եթե ինքնակենսագրության մեջ նկարագրվում են հեղինակ-հերոսի կյանքում գլխավոր օբյեկտիվ իրադարձությունները, ապա հուշագրություններում՝ այն **սուբյեկտիվը**, որ, հեղինակի կարծիքով, կարևոր են, հիշարժան են և ազդեցություն են թողել նրա հետագա կյանքի վրա:

Այս առումով հարկ ենք համարում սահմանազատել երկու կարևոր հասկացություն՝ **հեղինակ-պատմող** և **հեղինակ-մեկնաբան**: Երկու դեպքում էլ գործ ունենք նույն անհատի հետ՝ հուշագրության հեղինակի, սակայն դեպքերի նկարագրումը, նրանց գնահատումը և վերալիմաստավորումը տեղի է ունենում միևնույն մարդու՝ տեքստի նկատմամբ տարբեր դիրքորոշումների շնորհիվ: Յուզագրության ժանրում **ինքնահաղորդակցությունը** բավականին հաճախ հանդիպող երևույթ է: Այս առումով ինքնակենսագրության սուբյեկտիվության ազդանշաններն են **«ես»-ի իրական լինելը, փաստի հիմնավորումը միայն սուբյեկտիվ կերպով, հեղինակի գնահատականների սուբյեկտիվ բնույթը.**

<sup>4</sup> Кухаренко В.А. *Интерпретация текста*. М.: Просвещение, 1988.

<sup>5</sup> Бахтин М.М. *Эстетика словесного творчества*. М.: Искусство, 1979.

<sup>6</sup> Харузина В.Н. *Прошлое*. М.: Новое литературное обозрение, 1999.



**հեղինակի ուրույն տարածաժամանակային դիրքորոշումը:** Բացի այդ, ի տարբերություն ինքնակենսագրական տեքստի, որտեղ դեպքերի նկարագրումը ծավալվում է ըստ հաջորդականության, հուշագրային տեքստում հաջորդաբար են զարգանում հեղինակի հիշողությունները, որոնք կարող են չհամընկնել դեպքերի փաստացի հաջորդականության հետ:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «**Յետահայում և առաջահայում տեքստային կարգերը հուշագրության ժանրում**»:

Գեղարվեստական ժամանակի և իրական ժամանակի անբաժանելի միասնությունը առավել ակնհայտ է դառնում հուշագրության ժանրում հետահայում և առաջահայում տեքստային կարգերի շնորհիվ, այսինքն՝ կարելի է խոսել իրադարձությունների կանխատեսման (flash forward) և դեպի դրանց վերադարձի (flash back) մասին: Յեղինակը կարող է հիշել հաջորդ դեպքը, ապա անդրադառնալ նախորդին, հետո նորից հաջորդին և այլն: Ահա այստեղ է, որ առավել խոսուն են դառնում **հետահայումն** ու **առաջահայումը**, որոնք սակավաթիվ են խնդրո առարկա տեքստերում, սակայն բավականին հաճախադեպ են՝ հուշագրություններում:

Ինքնակենսագրական ստեղծագործությունում հեղինակը վերհուշի առնչությամբ նտադրված կերպով օգտագործում է հիշողության վերաբերյալ լեզվական ազդանշաններ. «հիշում են, տեսնում են, միտս են գալիս, as I can remember, now I remember that, I can see, և այլն»: Սրանք ներմուծում են անցյալ փաստերի, դեպքերի, իրականության կամ իրավիճակի նկարագրություն և վկայում են հեղինակի ընտրության մասին. ներկայացվում է հատկապես այդ դրվագը, հուշը, ևն:

Հուշագրությունների հեղինակը նկարագրում է անցյալ ժամանակահատվածը՝ տարբեր լեզվական միջոցներով: Մասնավորապես, նա ազատ է ընտրելու բառային միավորներ, որոնք վերաբերում են իր կյանքի որոշակի ժամանակահատվածին, օրինակ՝ մանկության ժամանակահատվածին բնորոշ բառեր, որոնք ճանաչելի են միայն հեղինակի, իր ժամանակակցի, կամ նույն ժամանակահատվածում և միջավայրում ապրող մեկ այլ մարդու համար: Բացի այդ, հուշագրությունների հեղինակը կարող է հուշագրային տեքստում ընդգրկել իր կյանքում կարևոր դեր խաղացած մարդկանց բնութագրերը և գնահատականները, որոնց նախընտրելի է անվանել **հուշագրային կերպարներ**: Իհարկե, անցյալի նմանատիպ նկարագրությունները զուրկ չեն սուբյեկտիվ-գնահատողական տարրերից և երանգավորումներից:

Հուշագրություններում հեղինակային մտադրությունն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն բառային միջոցների, կաղապարների սուբյեկտիվ ընտրության, այլև այլ բառաքերականական կիրառությունների մեջ, ինչպիսիք են, օրինակ, տարբեր ժամանակածների անցումները՝ ներկայից անցյալ, անցյալից ներկա, ապագայից անցյալ, անցյալից ապագա **«ժամանակային ցատկերի»** միջոցով:

Այսպիսով, հետահայումը կամ առաջահայումը չեն խախտում ժամանակագրական հերթականությունը, այլ միայն ընդհատում են այն՝ շեշտելու այս կամ այն տեղեկատվական տարրը՝ շարունակելիության կարգը վերածելով ընդհատվածության կարգի:

Սույն ատենախոսության ուսումնասիրության շրջանակներում առաջադրվում է այն դրույթը, որ հուշագրության ժանրում հետահայումը կարող է ունենալ նաև **հեղինակի սուբյեկտիվ** և **ընթերցողի օբյեկտիվ** մոտեցման ընդգրկում: Հուշագրությունների հեղինակը չի հորինում. նա ներկայացնում է իր հետ անցյալում տեղի ունեցածը, հետևաբար՝ նրա կողմից ներմուծված հետահայական պարբերությունները կարող են թողնել սուբյեկտիվ տպավորություն: Ինչ վերաբերում է ընթերցողի օբյեկտիվ հետահայմանը, ապա այն հատկանշական է հուշագրության ժանրին այնքանով, որքանով ընթերցողը կարող է վերհիշել հուշագրությունում ցանկացած վերասույթային միասնություն:

Հետահայումն ունի իրացման տարբեր ձևեր, որոնցից առանձնանում է **կրկնությունը**: Այն հետահայման ամենազխամարտ միջոցն է: Ավելի՛ն՝ հետահայումն ինքն արդեն կրկնության որոշակի ձև է:

Հետահայման տեքստային կարգը գործուն մեխանիզմ է նաև **ամփոփման մեջ**, որի ուղղությունը ակնհայտ է: Ընթերցողի ուշադրությունը հրավիրվում է տեքստի զխամարտ դրվագների, դեպքերի, փաստերի վրա, որից հայեցակարգային բովանդակությունը հստակեցվում է:

Հետահայումը և առաջահայումը ազդանշանող կարևորագույն քերականական միջոցներից են նաև անորոշ և որոշիչ **հոդերը**, քանի որ վերջիններս ցույց են տալիս տեքստում առկա հին և նոր, կամ հայտնի և անհայտ իրողությունները: Որոշիչ հոդը հիմնականում, եթե ոչ միշտ, կարող է հանդիսանալ հետահայումը կանխորոշելու միջոց: Որպես հետահայման միջոց՝ որոշիչ հոդը կարելի է համարել հնի ազդանշան/ցուցիչ, մինչդեռ անորոշ հոդը՝ նորը ներմուծող, սակայն դեռ չիրացված, չնշված կամ չիրացված տեղեկության ցուցիչ է:

**Մեջբերումը** ևս հետահայումն աշխուժացնող միջոցներից է: Սույն ատենախոսության շրջանակներում հետահայական մեջբերում ենք համարում հուշագրություններում տեղ գտած ուրիշի խոսքի օրինակները, որոնք, ի դեպ, կարող են պատկանել ինչպես հուշագրության հեղինակին, այնպես էլ նրա գրվածքի գործող անձանց:

Հուշագրություններում հետահայման կարգը կանոնավոր կերպով արտահայտվում է վերասույթային միասնության մեջ՝ ծավալով մեկ նախադասությունից մինչև մեկ պարբերություն, որն այս աշխատանքում առաջարկվում է անվանել *հուշագրությունների հետահայական վերասույթային միասնություն*:

Հետահայական վերասույթային միասնությունները հուշագրության ժանրում ձևավորվում են շնորհիվ հետևյալ ժամանակաձևերի.

ա) անցյալ վաղակատար (Past Perfect)

*Now they had come to Washington to save the free enterprise system.*

(Galbraith 1981:37)

բ) անցյալ վաղակատարի և անցյալ անորոշի զուգակցում (Past Perfect+Past Indefinite)

*The war had come, and of all the people of all the land, I was of the chosen. The fates had been kind or maybe just precise. (Galbraith 1981:146)*

գ) անցյալ անորոշ ժամանակաձևով պատումի մեջ ներկա անորոշ ժամանակաձևի ներմուծում (Past Indefinite+Present Indefinite).

The memories of those six months are all vivid, indelible ones; and although they were never reduced to any system of conclusions, I am aware that they had asleep effect on the image I formed of the post-World War I Europe. (Kennan1967:52)

դ) անցյալ վաղակատար, անցյալ անորոշ և ներկա անորոշ ժամանակաձևերի զուգակցում: (Past Perfect+Past Indefinite+Present Indefinite)

Այս դեպքում, կիրառությանը պայմանավորված, կարող է թվալ, թե հեղինակի հուշագրային ներկա ժամանակը հակասում է նրա հուշագրային անցյալին: Իրականում հեղինակը միտումնավոր շեշտում է ներկա ժամանակը՝ դրանով իսկ իրականացնելով օբյեկտիվ հետահայում անցյալ վաղակատարով:

No boy of my acquaintance had had ever been overburdened with an extensive wardrobe. (Kennan1967:41)

ե) անցյալ անորոշ ժամանակաձևերի զուգակցում (Past Indefinite+Past Indefinite...).

So deep was the bitterness that one seldom spoke to a stranger at table; everyone feared that to open a conversation would lead the others to suppose that he couldn't take it. (Kennan1967:12):

Այն դեպքերում, երբ հուշագրային ներկա ժամանակն արտահայտված է ներկա անորոշ ժամանակաձևով, հեղինակային տեքստի ստեղծման ժամանակը համահունչ է ընթերցողի տեքստի ժամանակին: Ընթերցողի մոտ ստեղծվում է պատրանք, որ կերպարի հետ տեղի ունեցող իրադարձությունները իրական են:

Morning. The dawn comes late and faintheartedly, through grey skies and gusts of rain. (Kennan 1967:44)

Չետահայման առավել վառ արտահայտված և հաճախ հանդիպող արտահայտչամիջոցներ են հանդիսանում **բառային/բառակապակցական միավորները**, որոնք ինքնավար ձևով փոխադրում են պատումը այլ ժամանակային հարթության մեջ: Մեր դիտարկած նյութում՝ կազմված անգլոամերիկյան հուշագրային օրինակներից, առանձնացրել ենք հետահայումը խթանող և միաժամանակ ազդանշանող բառային և բառակապակցական միավորների մի քանի խումբ.

1. «հիշողություն», «հիշել» նշանակությամբ բառեր և արտահայտություններ. I remember, As I recall ...

I remember him mostly for his capacity for effective expression.

2. Ago, before, early, one time մակբայներն ու մակբայական արտահայտությունները, որոնք պարունակում են նախորդման իմույթ: A few months earlier, president Roosevelt, reflecting a lifelong concern, had asked that serious attention be given to the state of the American land. (Galbraith 1981:36)

3. ցուցական that և those դերանունները, որոնք ընթերցողին վերադարձնում են առաջադրված փաստական տեղեկատվական բովանդակությամբ:

Those four of us constituted the entire staff of the American embassy in Moscow at that time. We had no codes, no safes, no couriers, no security officers. (Kennan 1967:59)

4. Դեղինակային ներկայում որոշ գործողությունների նպատակը բացահայտելու համար հետահայումը ներմուծվում է պատճառային շաղկապների միջոցով (because, since, for):

The Philippines for years had been at the bottom of the preference list. Because of this, when the time came for purchasing uniforms, I ordered only tropicals. (Eisenhower 1967:82)

Դետևելով L. Ֆյոդորովայի կողմից կատարած գեղարվեստական տեքստում առկա հետահայման դրսևորումների դասակարգմանը՝ փորձ է արվել կիրառել այն հուշագրությունների ժանրում հետահայման վերասույթային միասնությունների լեզվական դրսևորումները քննելիս:

Կախված հաղորդվող հայեցակարգային տեղեկատվական բովանդակությունից՝ հուշագրային հետահայական վերասույթային միասնությունները կարելի է դասակարգել հետևյալ կերպ:

1. **Համեմատական** են այն վերասույթային միասնությունները, որոնց միջոցով տեղի է ունենում համեմատություն հուշագրության հեղինակի հետ տեղի ունեցած դեպքերի, նրա կյանքում առկա մարդկանց, իրավիճակների միջև, և ընդհանրությունները վեր են հանվում հեղինակի սուբյեկտիվ հետահայման միջոցով:

But in those days, given a high school diploma, admission to a college, any college, was entirely a matter of money. The Ontario Agricultural College, with which were associated schools of home economics and veterinary medicine and, oddly, an academy for instruction in the science and art of baking, was then, as it is still, located in the city of Guelph, some fifty or sixty miles west of Toronto. (Galbraith 1981:87)

2. **Նկարագրական** են այն ամբողջական հետահայական վերասույթային միասնությունները, որոնք ընդգրկում են հուշագրությունների հեղինակի կողմից մարդկանց, առարկաների, վայրերի, երևույթների սուբյեկտիվ պատկերումը:

In appearance, we shared strong family characteristics but, since my father was dark and swarthy and my mother a golden blonde, there were predictable differences. Arthur and Roy were dark, Ed's and Milton's hair was chestnut-colored. I was so light that I was often dubbed "The Swede" by opponents in intercity athletics, while Earl was a fiery redhead. (Eisenhower 1967:70).

3. **Սահմանող** են այն հետահայական վերասույթային միասնությունները, որոնցում բացահայտվում է հուշագրության առարկաների/իրողությունների և երևույթների բովանդակությունը:

The founding member of our family in Canada, according to his gravestone in Black's Cemetery in Dunwich Township near the village of Wallacetown, was born in Argillshire in 1771 and died in Ontario in 1874, although some later research by a clan historian suggests that if these dates are accurate, he was born a year or two before his parents first met. (Galbraith 1981:2):

4. **Եղանակավորող** հետահայական վերասույթային միասնությունները հուշագրության ժանրում պարունակում են անցյալ իրադարձություններին և երևույթներին վերաբերող հուշագրության հեղինակի կողմից ներմուծված գնահատականներ:

- *հուշագրային հեղինակի քննադատությունը սեփական արարքների վերաբերյալ*

It was an adventure I look back upon now with a distinct absence of pride. (Kennan 1967:13).

- *հուշագրային ներկայում հեղինակի կյանքի իրավիճակը,*

It is clear now that life with General Conner was a sort of graduate school in military affairs and the humanities. It took years before I fully realized the value of what he had led me through. And then General Conner was gone. But in a lifetime of association with great and good men, he is one to whom I owe an incalculable debt. (Eisenhower 1967:38).

- *հուշագրային կերպարի վարքը*

In several respects, he was a rewarding man to work for. When he gave an assignment, he never asked any questions; he never cared what kind of hours were kept; his only requirement was that the work be done. (Eisenhower 1967:149).

Քանի որ հուշագրության ժանրին հատուկ են հեղինակի ինքնավերլուծական գնահատականները, ապա հուշագրություններում եղանակավորող հետահայական վերասույթային միասնությունները իրենց բնույթով և գնահատող, և՛ քննադատական են:

Հուշագրություններում **եղանակավորող** հետահայական վերասույթային միասնությունները, որոնց կազմում ընդգրկված են եղանակավորող բառերով (perhaps, shouldn't, ևն) նախադասություններ, արտահայտում են հուշագրության հեղինակի կասկածները՝ անցյալում իր վարքագծի համարժեքության վերաբերյալ:

Ինչպես արդեն նշվել է, Ի. Գալպերինը տարբերում է հետահայման երկու տեսակ՝ ընթերցողի սուբյեկտիվ և հեղինակի օբյեկտիվ դիտակետից: Առաջինը պատմության շարունակելիության անհատական, ստեղծագործական ընկալման արդյունք է, երկրորդը ենթադրում է հեղինակի կողմից նպատակաուղղված գործողություն: Սույն ատենախոսությունում առանձնացվում է օբյեկտիվ հեղինակային հետահայման երկու տեսակ.

1. ընթերցողին՝ հուշագրային տեքստում նախկինում հաղորդվող փաստերին վերադարձնող հետահայում: Պայմանականորեն այդպիսի հետահայումն անվանենք *հետահայական հղում*:

The outcries came. Most of the time, I was too busy to worry about them. But at the height of the furor about the "Darlan deal" I did reflect uneasily that

charges of incompetence as a political man, a role for which I had little training and little liking, could end my career. (Eisenhower 1967:166).

2. տեքստային հետահայում, որը ցույց է տալիս նոր, անցյալին վերաբերող, սակայն հուշագրային տեքստում դեռևս չհիշատակված փաստեր: Այդ դեպքում ժամանակային տեղաշարժն իրականացվում է զուտ կառուցվածքային եղանակով: Պայմանականորեն այսպիսի հետահայումն անվանենք *հետահայական ներմուծում*:

General Omar Bradley was not only a favorite classmate of mine at West point, but a man I had admired throughout his military career. (Eisenhower 1967:167)

Վերադարձնող հետահայումը հուշագրային տեքստում կարելի է անվանել **երկաստիճան**, քանի որ վերջինս հետահայում է հետահայման մեջ: Այն արտահայտում է հեղինակի կամքը՝ նորից հիշատակելու նախորդ էջերում ասվածը, փաստորեն, իրացնելով հուշագրային տեքստում այդ պահին անհրաժեշտ ժամանակային ընդհատումը: Այլ է տեքստային հետահայումը. նույնպես լինելով հետահայում հետահայման մեջ, այն երկաստիճան չէ ամենևին, քանի որ, չնայած նույնպես հին տեղեկատվություն է հաղորդում, սակայն հեղինակը ընտրում է ներկայացնել այն որպես նոր: Այսինքն՝ այն հին է հուշագրության հեղինակի համար, այլ ոչ թե ընթերցողի:

**Արտակա** հետահայումը հուշագրային տեքստում կարող է լինել ինչպես քերականական, այնպես և բառային: Տեքստում ժամանակային ցուցիչների (ago, the previous year և այլն) և «հիշել» նշանակությամբ թեմատիկ խմբին պատկանող բառապաշարային միավորների (remember, recollect, look back upon և այլն) առկայությունը, ընթերցողին անսխալաբար վերադարձնում է ելակետային տեղեկատվական բովանդակությանը:

Բացի հետահայման ներմուծման վերոհիշյալ եղանակից, գոյություն ունի նաև **ներակա** ձևը, որն ի տարբերություն արտակայի, արտահայտվում է անուղղակի ձևով՝ ոճական հնարների, զուգորդումների օգնությամբ, որոնց մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում կրկնությունը:

Ինչպես հետահայումը, առաջահայումը ևս տեքստային կարգ է, որն օգնում է ընթերցողին կանխատեսել գալիք դեպքերը, որը հեղինակը պլանավորում է և իրացնում: Այն նաև օգնում է կապ հաստատել տարբեր դեպքերի և իրադարձությունների միջև:

Ինչպես հետահայումը, առաջահայումը ևս կարող է ունենալ երկու ընդգրկում՝ հեղինակի օբյեկտիվ և ընթերցողի սուբյեկտիվ դիտակետից: Այսինքն՝ հեղինակը կարող է ուրվագծել դեպքերի հետագա զարգացման հեռանկարը կամ լեզվական միջոցներով կանխատեսելի դարձնել տեքստի ժամանակային զարգացման հնարավորությունը:

Առաջահայում տեքստային կարգի կարևորագույն դրսևորումներից է, այսպես կոչված, *խաբուսիկ սպասելիքների ազդեցություն* երևույթը, երբ ընթերցողը կանխատեսում է դեպքերի հետագա զարգացման ընթացքը, սակայն նրա ակնկալիքները չեն արդարանում:

Յուշագրությունների հեղինակը, լինելով պատումի գլխավոր հերոսը, ապրում է այն իրադարձությունների զարգացումով, որոնք տեղ են գտել նրա անցյալում, հետևաբար, նրա սպասելիքները կարող են արդարացված չլինել:

Յուշագրության ժանրում առաջահայում արտահայտելու միջոցներից է ժամանակի քերականական կարգը, և հատկապես **պայանքի ժամանակածնը**, քանի որ այն արտահայտում է դեպքերի հետագա զարգացումը՝ ներկայացվող հեղինակի կողմից և վերծանվող ընթերցողի մտքում:

Even now as I write of it, the keenness of our loss comes back as fresh and terrible as it was in that long dark day soon after Christmas, 1920. (Eisenhower 1967:135).

**Վերնագիրը** ևս առաջահայման ձև է, և այն ևս կարող է առաջ բերել խաբուսիկ սպասման ազդեցություն: Երբ հուշագրությունը դեռ կարդացված չէ, վերնագիրը կարող է դրդել ընթերցողին գուշակել բուրրովին այլ բովանդակություն կամ վերջաբան:

Այսպիսով, առաջահայումը տեքստի կարգ է, որը կիրառվում է հաջորդող իրադարձությունների ներմուծման նպատակով. այն հայացք է դեպի ապագան, որը թույլ է տալիս հեղինակին իրագործել ապագայի դիրքից ներկան վերլուծելու և գնահատելու գործընթացը և, վերջապես, ներկայի իմաստավորումը կամ վերաիմաստավորումը:

Այստեղ պետք է արձանագրել իրական ժամանակի և հուշագրային ժամանակի անհամապատասխանության փաստը. այն պահը, որ հեղինակի անձնական պատմության մեջ հանդիսանում է ներկան՝ այսպես կոչված «հուշագրային ներկան», իրականում՝ հուշագրությունը գրելու պահի համեմատությամբ հանդիսանում է անցյալ:

Սույն ատենախոսության շրջանակներում կատարված հուշագրային նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ հեղինակներն իրենց ստեղծագործություններում ժամանակային կտրվածքի տեսանկյունից օգտագործում են երկու տեսակի առաջահայում. 1) **լիածավալ առաջահայում** 2) **մասնակի առաջահայում**:

Լիածավալ առաջահայումն ընդգրկում է տվյալ հուշագրության ամբողջ ժամանակահատվածը:

At Harvard Schumpeter was sought out principally by students who wished to dispute his views. His assistant in those years and his most admiring friend was Paul M. Sweezy, *who was later to be* the best known of American Marxist scholars and, I might add, my own friend of a lifetime. (Galbraith 1981:50).

Մասնակի առաջահայումն ընդգրկում է այն ժամանակահատվածը, որը հետ է ընկնում հուշագրության կերտման պահից կամ հիշողությունների արձանագրման պահից և ուղղված է դեպի ապագան, բայց չի հասնում մինչև իրական ներկան, մինչև հուշագրությունը գրելու պահը:

A wilderness is now thought a valuable thing: then it was only a wilderness. Additionally I was surrounded by sensible men, who thought the whole idea irresponsible. To clear tax titles would require special legislation. *Good money would then go out and worthless land would come in...* (Galbraith 1981:37).

Ըստ ժամանակային կապերի վերհանման բնույթի՝ առաջահայումը կարելի է բաժանել երկու տեսակի. «միաստիճան», ինչպես վերը նշված բոլոր օրինակներում, և բազմաստիճան կամ աստիճանավորված:

Աստիճանավորված առաջափայտունը դեպքերի և փաստերի փոխադարձ կապի և փոխապայմանավորվածության միջոց է հուշագրություններում:

So the manuscript was finished, and in the fall of 1948 an ad hoc partnership of the *Herald Tribune* and *Doubleday*, in the persons of Mr. Robinson and Mr. Black, made an offer which I considered more than generous. I expressed again and again *the fear that they would have an expensive white elephant* on their hands. They smiled and said that, on the contrary, they were not sure they were treating me fairly. Both publishers and I later became warm friends.

Յուշագրություններում **հաճախ միախառնվում են կերպարային և հեղինակային ժամանակները**: Յեղինակային հետահայման մեջ կարելի է հանդիպել կերպարային առաջափայտման: Կանխատեսումը, որ իրականանում է հեղինակային հետահայմանը զուգահեռ, կրում է կերպարի առաջափայտման բնույթ՝ խախտելով հուշագրային տեքստի գեղարվեստական ժամանակը:

Many of the publishing proposals were purely financial. I was not one to scorn money, but money alone had no temptation....*Mr. Black and Mr. Robinson pointed out that since these errors were written during my lifetime and were not denied or corrected by me, the historians of the future must give them a high degree of credence.* "You owe it to yourself and to history to tell the personal story of your European campaigns on a factual basis". This reasoning impressed me. (Eisenhower 1967:193)

Յուշագրություններում հաճախ են դեպքերը, երբ **առաջափայտունը կախված է հետահայումից**: Որպեսզի տրամաբանական կապ հաստատվի հուշագրային ապագայի կանխատեսելիության և հեղինակային ներկայի միջև, հեղինակը դիմում է հետահայման.

And it seemed logical that I would draw this assignment. (Eisenhower 1967:185)

Ինչպես և հետահայման դեպքում, առաջափայտման դրսևորումները հուշագրություններում իրականանում են բառաքերականական միջոցներով՝ զգայական գունավորում հաղորդելով հեղինակի հետահայմանը, որի մեջ էլ նրանք հանդես են գալիս (ridiculously far off, a whole lifetime in the future):

Յուշագրային ժանրի մեկ այլ առանձնահատկություն է **առաջափայտման կարգի մասնակի իրացված լինելը**: Առաջափայտունը նման դեպքերում գործում է հեղինակի սուբյեկտիվ առաջափայտման մակարդակում և չի տարածվում ընթերցողի վրա: Մասնակի իրացումը, որպես կանոն, բնութագրվում է կարծրատիպային կառույցներով, օրինակ՝ to be supposed to do smth., had to do smth. ևն, եղանակավորող կառույցներով, որոնցից իմաստաբանական և տրամաբանական առումով բխում է but ներհակական համադասական շաղկապի կիրառումը, որն էլ հաստատում է առաջափայտման կարգի մասնակի իրացված լինելը: Առաջափայտման կարգն այստեղ իրացված է միայն մինչև "but"-ը և չի հասնում հուշագրային ներկա:

Առաջափայտման միջոցով հուշագրություններում հնարավոր է իրացնել հեղինակային սուբյեկտիվ եղանակավորման կարգը:

Քանի որ հուշագրություններում տեքստային կարգերը գտնվում են սերտ փոխադեցության մեջ, հաճախ կարելի է հանդիպել մի կարգի



դրսևորումը մյուսի միջոցով: Տեքստային կարգերի շարքում խնդրո առարկայի տեսանկյունից կարևորվում է **մասնատվածության կարգը**, որն անբաժանելի է ամբողջականացման կարգից: Հուշագրություններում գլուխները սովորաբար վերնագրված են: Այնպիսի վերնագրեր, ինչպիսիք են՝ “I to the point”, “Those I came from” և այլն արտակա կերպով են իրացնում հետահայման և առաջահայման կարգերը:

Հուշագրություններում գլխավոր կերպարը՝ գործող անձը, հենց ինքը հեղինակն է, ուստի հեղինակային «ես»-ը այստեղ մղվում է առաջին պլան:

Առաջահայման իրացման գործընթացում կարևորվում է տեքստի այնպիսի իմաստաստեղծ գործոն, ինչպիսին է **ենթատեքստը**՝ հիմնված այնպիսի ապագայի իմաստույթ պարունակող վերասույթային միասնությունների վրա, որոնք հեղինակը զետեղում է հետահայական պատումի մեջ, բայց որոնցում առաջահայումը բացահայտ չէ, այլ հաղորդվում է ենթատեքստում՝ տողատակում:

Հուշագրություններում առաջահայման գործառույթ են կատարում նաև **հռետորական հարցերը**, որոնք վերաիմաստավորում են հեղինակի վերաբերմունքը ապագայի նկատմամբ:

Ինչպես նշում է Ի. Առնոլդը. «Ձևով հաստատական նախադասությունները կարող են կիրառվել որպես հարցեր, եթե հարցնողը ցանկանում է ցույց տալ, որ ինքը կանխագուշակում է, թե ինչպիսին է լինելու պատասխանը» (Арнольд 1981:165): Հիրավի, հուշագրության հեղինակը ոչ միայն կանխագուշակում է իր հարցի պատասխանը, այլև հանդված է դրանում, քանի որ վերապրել է այդ իրողությունը:

I received your letter of the 9<sup>th</sup> ult. The account of my father's leg growing worse and worse concerns me: but what can I do? I look to my God, and my father's God. "He doeth all things well," and he will make all things work together for good to those who love him. My father, my brother, my sisters, I resign you all, and myself to his care, who I trust careth for us. Are not our days few?... (Morrison 1839:366)

Եզրակացության մեջ ամփոփվում են ուսումնասիրության արդյունքները:

Առաջահայում և հետահայում տեքստային կարգերի տեսագործական արժևորման նպատակով կատարված սույն ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

Տեքստի կարգերի համալիր ուսումնասիրությունը ոչ միայն հնարավոր է դարձնում տեքստի առանձին բաղադրիչների քննությունը, այլև օժանդակում է նրա ամբողջական ընկալմանը՝ ներառյալ դրանում առկա տեղեկատվական բովանդակության յուրացումը: Ընտրված նյութի քննության պարագայում ժամանակը ձեռք է բերում, փոխաբերաբար ասած, լրացուցիչ «չափումներ»:

Լինելով միջժանրային երևույթ՝ ինքնակենսագրական տեքստը ապակողավորման ընթացքում ընթերցողի մոտ առաջացնում է որոշակի սպասումներ, որոնք պայմանավորված են տեքստի և՛ փաստական, և՛ հուզական ծավալմամբ:

Ինքնակենսագրական տեքստը ոչ միայն ծավալվում է ժամանակի մեջ, այլև ինքն է ստեղծում տարածաժամանակային հարաբերությունների

որոշակի կաղապար, որով այն կապվում է այլ տեքստերի հետ և՛ ներգրավվելով միջտեքստային ցանցի մեջ: Հուշագրության ժանրն առանձնանում է որպես փաստի վրա հիմնված տեքստ՝ գերհագեցած գեղարվեստական տարրերով: Որպես ինքնակենսագրական տեքստ՝ պատմություն հեղինակի կյանքի կարևոր փաստական դրվագների մասին, հուշագրությունը զուրկ չէ գեղարվեստի տարրերից, քանի որ այն ներառում է ոչ միայն անցյալի մասին հիշողություններ, այլ նաև զգացմունքային զնահատականներ, մտորումներ՝ շարադրված առաջին դեմքով և ներկայացնող հեղինակի սուբյեկտիվությունը:

Ինքնակենսագրության մեջ հարաբերվում են երկու իրողություն՝ ժամանակը և անհատը:

Հուշագրային գրականության մեջ ժամանակի հեղինակային սանդղակն ունի երկու հիմնական ազդեցություն՝ փաստական և հուզական: Վերջինս զգալի չափով պայմանավորված է ժամանակային ընդհատումներով՝ հետահայման և առաջահայման կիրառությամբ:

Ինչ վերաբերում է տեքստային կարգերի համալիր փոխազդեցությանը, ապա հստակ ուրվագծվում են հետևյալ օրինաչափությունները:

1. Հուշագրության ժանրում հարաբերվում են այնպիսի տեքստային կարգեր, ինչպիսիք են եղանակավորումը, հետահայումը, առաջահայումը, տեղեկատվականությունը, շարունակելիությունը, ընդհատվածությունը, ներկապակցումը, ինչը հուշագրային տեքստի տիպաբանական բնութագիրն է, նրա գոյության նախապայմանը: Տեքստային կարգերի փոխկապակցվածությունը ներշաղկապված է տեքստի ամբողջականությանը՝ ներառյալ հաղորդակցության երկու կողմերի՝ հեղինակի և ընթերցողի ներգրավվածությունը:
2. Հուշագրային տեքստում պարտադիր գոյաբանական պայման են հանդիսանում նաև մարդակենտրոնությունը և տարածաժամանակային հարաբերակցությունները, որոնք գործում են տեքստի ավանդաբար ընդունված կարգերին զուգահեռ կամ դրանց միջոցով: Ժամանակի կարգի ցուցիչները, որոնք իրացվում են հուշագրային տեքստում, կատարում են երկու կարևոր գործառույթ: Նրանք նախ՝ հանդես են գալիս որպես միջասույթային կապի միջոց, ապա՝ ստեղծելու համար տեքստի գեղարվեստական ժամանակը:
3. Առաջահայում կարգը հուշագրություններում, ի տարբերություն այլ ժանրերի, անկախ գոյություն չի կարող ունենալ. այն գործում է միայն հետահայման մեջ, և նրա բոլոր գործառույթներն ու առանձնահատկությունները կարող են բխել հետահայման դիրքից: Առաջահայումը, ինչպես և հետահայումը, իրականացնում է ժամանակային ընդհատման գործառույթը, և նրան ներհատուկ խաբուսիկ սպասելիքների ազդեցությունը հուշագրություններում տարածվում է հեղինակի սուբյեկտիվ առաջահայման վրա:
4. Հուշագրային տեքստում հեղինակի հետահայումը ծառայում է երկու հիմնական նպատակի, այսինքն՝ խթանում է երկու գործընթաց: Առաջինն ուղղված է ընթերցողի հետահայմանը, որ

վերջինս վերհիշի վաղօրոք հաղորդածը կամ յուրացնի անցյալի հետ կապված նոր տեղեկությունները, ինչպես նաև ձևավորի սպասումներ: Երկրորդը տեքստի այն տարբեր մասերի իրացումն է, որոնք վերաբերում են հայեցակարգային տեղեկատվական բովանդակությանը: Փաստորեն, հեղինակի օբյեկտիվ հետահայման կիրառումը աննպատակ չէ այս ժանրում. վերջինիս զործառույթն է խթանել ընթերցողի սուբյեկտիվ հետահայումը: Ընթերցողին ստիպելով հիշել անցյալ դեպքերը՝ հուշագրային հեղինակն իրացնում է հուշագրային տեքստի չիրացված մասերը՝ հայեցակարգային բովանդակությունը փոխակերպելով փաստացի:

5. Ոլորտում ընդունված հեղինակի օբյեկտիվ և ընթերցողի սուբյեկտիվ հետահայում մեխանիզմների կողքին՝ մեր սահմանած օբյեկտիվ-հեղինակային հետահայումն իր երկու տեսակներով՝ վերադարձնող և տեքստային, դրսևորվում է որպես երկաստիճան կամ միաստիճան ընթացք, ինչպես նաև ներակա կամ արտակա երևույթ:  
Իր լիածավալ կամ մասնակի որակներում և ըստ ժամանակային կապերի բնույթի՝ առաջահայումը ևս դրսևորում է աստիճանակաբանություն (լինելով միաստիճան և բազմաստիճան):
6. Հետահայման իրացման հիմնական խոսքային ձևերը դիտարկված անգլիական և ամերիկյան հուշագրություններում կարելի է խմբավորել հետևյալ կերպ.
  - ա) կրկնություններ՝ որպես ընթերցողի կողմից հեղինակային հետահայման ապակողավորման խթան,
  - բ) ամփոփումներ՝ ընթերցողի ուշադրությունը հուշագրության գլխավոր դրվագների, դեպքերի, փաստերի վրա հրավիրելու համար,
  - գ) ժամանակաձևերի կիրառություն՝ որպես ժամանակային տեղաշարժերի հիմնական խթան,
  - դ) բնորոշիչ անդամներ՝ ներառյալ անորոշ և որոշիչ հոդեր տարորոշելու համար հուշագրային տեքստում առկա հին և նոր տեղեկությունները,
  - ե) մեջբերումներ՝ իմաստավորվող հետահայական վերասույթային միասնության շրջանակներում,
  - զ) բառային/բառակապակցական միավորներ՝ նպաստող ժամանակային թռիչքներին, ինչպես նաև զուգորդումների առաջացմանը,
  - է) հետահայական վերասույթային միասնություններ՝ գործառող որպես համեմատական, նկարագրական, սահմանող և եղանակավորող միավորներ:
7. Ե՛վ հետահայումը, և՛ առաջահայումը՝ որպես ժամանակի կարգի հիմնական մեխանիզմներ հուշագրության ժանրում, ոչ միայն ուղեմշում են տեքստի տարածաժամանակային ծավալումը

համապատասխան առանցքներով (դեպի անցյալ/հինը կամ ապագա/նորը), այլև հեղինակի և ընթերցողի «երկխոսությանը» հուզական գունավորում են հաղորդում: Եվ թերևս ժամանակի հուզական չափումների և համապատասխան արտահայտչականության այս ոլորտը հարուստ նյութ է տալիս հետազոտության համար նաև շնորհիվ այն բանի, որ դիալեկտիկական կապի մեջ են ոչ միայն հետահայում և առաջահայում կարգերը, այլև շարունակականություն և ընդհատվածություն, մասնատվածություն և ամբողջականություն երկատումները:

### **Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Ռետրոսպեկցիա և պրոսպեկցիա կարգերի դրսևորումները հուշագրությունների ժանրում // «Արդի բանասիրության հիմնախնդիրները» Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, N5, «ԵՊԼՀ Լինգվա» հրատ., 2006, էջ 84-90:
2. Գեղարվեստական տեքստի առանձնահատկությունները բանասիրական վերլուծության լույսի ներքո // Հայաստանի Հանրապետության Սոցիալ-Տնտեսական Կայուն Ջարգացման հիմնախնդիրները / Երևանի «Անանիա Շիրակացի» Միջազգային Հարաբերությունների Համալսարան 1(13), 2012, էջ 279-282:
3. Պրոսպեկցիա տեքստային կարգի դրսևորումները ռետրոսպեկցիա կարգի մեջ // «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հանդես, 2006, էջ 8-9:
4. Լեզվաոճական կարգերի հարաբերակցությունը հուշագրության ժանրում // Բանբեր, «Բանասիրություն» 1(30), 2014, էջ 56-66:
5. Հուշագրության ժանրի գեղարվեստական հայեցակերպը ժամանակի կարգի քննության լույսի ներքո // «Կանթեղ», 2014 N2-3 (59-60), էջ 30-42:

**ЭВЕЛИНА РОБЕРТОВНА ЗАДОЯН**

**ЛИНГВИСТИЧЕСКИЕ РЕПРЕЗЕНТАЦИИ ТЕКСТОВЫХ КАТЕГОРИЙ  
РЕТРОСПЕКЦИИ И ПРОСПЕКЦИИ В ЖАНРЕ МЕМУАРОВ** (на материале  
английского языка)

**Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по  
специальности 10.02.07 “Германские языки”**

Защита состоится 6-го мая 2015 г. в 12:30 на заседании специализированного совета  
009 – “Иностранные языки” ВАК РА при Ереванском государственном  
университете

**РЕЗЮМЕ**

Реферируемая диссертация посвящена исследованию лингвистических репрезентаций текстовых категорий ретроспекции и проспекции в жанре мемуаров на материале английского языка.

**Целью** настоящей работы является целостное и системное изучение англоязычных мемуаров как вида текста и жанра, а также выявление их текстовых, жанровых, лингвистических и временных особенностей.

В соответствии с поставленной целью определены следующие **задачи** исследования:

1. Исследовать теоретические основы категории времени
2. Определить жанровые особенности мемуаров
3. Выявить лингвистические особенности ретроспекции и проспекции как основных текстовых категорий мемуарного жанра.

**Объектом** исследования являются англоязычные мемуары, а предметом изучения служат языковые особенности текстовых категорий ретроспекции и проспекции, которые составляют временной план повествования.

**Актуальность** исследования обусловлена нарастающим интересом в современной лингвистике к взаимосвязи текстовых и внетекстовых категорий, одной из которых является реальное время. Изображение времени в мемуарном произведении, создание меняющейся временной перспективы и изучение тех текстовых категорий, которые принимают в этом участие - одна из интереснейших проблем современной лингвистики текста.

**Новизна** настоящего исследования заключается, прежде всего, в выборе объекта исследования. Интерес к проблеме времени вызван, в частности, и особенностями мемуарной литературы, для которой характерны особое осмысление времени, сложное переплетение различных временных планов, а также нарушение

последовательности как хронологического ряда событий, так и общей канвы повествования. В основе образования текстового времени лежат механизмы ретроспекции и проспекции, которые находятся в диалектической взаимосвязи с категориями темпоральности и художественного времени.

**Теоретическая значимость** диссертации в более широком смысле состоит в комплексном исследовании текстовых категорий в свете ретроспекции и проспекции, видов их реализации в англоязычных мемуарных текстах.

**Практическая значимость** работы заключается в том, что результаты данного исследования могут быть использованы в дальнейшем при лингвистическом анализе художественного текста, а также в качестве практического пособия по теории текста и стилистике английского языка.

EVELINA ZADOYAN

**LINGUISTIC REPRESENTATION OF THE TEXTUAL CATEGORIES OF  
RETROSPECTION AND PROSPECTION IN THE GENRE OF MEMOIRS**

(on the material of English language)

**SUMMARY**

The subject matter of the present research is the linguistic representations of the textual categories of retrospection and prospection in the genre of memoirs. The study of text and textual categories, in particular retrospection and prospection, proves attractive both in terms of the complex nature of time and the specificity of the genre.

The importance of continuity in the general process of text construction on the one hand and the lack of research on the topic of prospection and retrospection in the text, from the point of view of their role as categories maintaining continuity, coherence and cohesion resulted the investigation of the above mention categories of text. The specificity of the genre under discussion, i.e. memoirs, contributes to a more interesting case of retrospection and prospection analysis. Memoirs, being a narration about the past experience of the author are based on facts. Though factual by its nature, they are not devoid of emotional characteristics, since the author doesn't only tell about the past, but also evaluates the past from the perspective of the time at which he has taken up to compose the memoirs. Thus, the retrospection and prospection, being a temporal breach in the usual development of time and its continuum are conditioned by the actual facts and the way the author of the memoirs intends to present them. Retrospection and prospection violate and disturb special and chronological continuum (centrifugal power of the text). But due to precise cohesion and coherence of the autobiographical text, in this case memoirs, a particular fragment of the text fluently flows into a textual net (centripetal power of the text) and forms a semantic and contextual bridge which connects the previous and the following segments of narration.

Considering these, the following objectives have been formulated for investigation:

1. The theoretical bases for the evaluation of the category of time
2. The parameters of the genre of memoirs in terms of time organization and temporality
3. Retrospective supraphrasal units in memoirs and their linguistic representations
4. Prospection in memoirs and its linguistic representations.

The topicality of the research is conditioned by the dynamic changes in the understanding of text and textuality on the one hand, and hybrid character of the genre of memoirs on the other.

**The novelty** of the research is determined by the choice of the subject matter itself. For the first time an attempt has been made to observe retrospection and prospection in light of breaks in continuity and chronological order of events, as well as correlations of real time and changing perspectives of textual time in memoirs. All the above is triggered by the mechanisms of retrospection and prospection to study which, the complex approach is performed including other textual categories. Hence, retrospection

is defined as having four dimensions in the author – reader communication: subjective and objective on both parts respectively.

**The theoretical value** of the study consists in the possible contribution of the research results to the theory of text and analysis of textual categories in a broader sense. On a more particular scale the linguistic realization of retrospection and prospection is evaluated in the context of memoirs.

**The practical significance** of the research will show itself when applied as part of as theoretical and practical courses in stylistics and text linguistics.

A handwritten signature in cursive script, appearing to read 'Bifur' or similar, with a large, stylized initial 'B'.